# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

8 սեպտեմբերի 2022 թվականի N 1400 - Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 11-Ի N 970-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 11-ի «Պետական սեփականություն հանդիսացող հատուկ մշակված համակարգի (բջջային հավելված) տեխնիկական բնութագիրը (նկարագրությունը, ինտերֆեյսը) և դրանից օգտվելու կարգը սահմանելու մասին» N 970-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) որոշման N 1 հավելվածի 4-րդ գլուխը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. ՕԳՏԱՏԻՐՈՋ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՎ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

7. Օգտատերերը նույնականացում կարող են անցնել «activesociety.am» վեբ կայքում կամ «Ռոադ Քոնթրոլ Արմենիա» («Road Control Armenia») բջջային հավել-վածում:

7.1. Բջջային հավելվածն օգտատերը կարող է ներբեռնել «Play Market» կամ «App Store» համակարգերից՝ կախված սարքի տեսակից, ինչպես նաև ներբեռնել հաստատման SMS հաղորդագրությունում նշված հղումով:

8. Հավելվածը ներբեռնելուց և գործարկելուց հետո բացվող պատուհանում օգտատերն ընտրում է հավելվածի լեզուն և հաստատում, որից հետո ընտրում է «Նոր օգտատեր» դաշտը:

9. Մինչև նույնականացում անցնելն օգտատերը համաձայնում է համակարգի ընդհանուր դրույթներին և պայմաններին, որի համար «Համաձայն եմ ընդհանուր դրույթներին և պայմաններին» ակտիվ հղման վրա սեղմելու դեպքում բացվում է «Դրույթներ և պայմաններ» պատուհանը: Ծանոթանալով համակարգի օգտագործման դրույթների և պայմանների հետ՝ տալիս է համաձայնությունը:

10. Հաջորդ պատուհանում օգտատերը համապատասխան դաշտերում լրացնում է հետևյալ տվյալները՝

1) անունը, ազգանունը, հայրանունը.

2) անձնագրի կամ նույնականացման քարտի տվյալները (փաստաթղթի համարը, այն տրամադրած ոստիկանության ստորաբաժանման ծածկագիրը, տրամադրման և վավերականության ժամկետները).

3) հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշը չստանալու մասին տեղեկանքի համարը.

4) այն հեռախոսահամարը, որին փոխանցվելու է հաստատման կոդը:

11. Նույնականացում անցնելուց և հաստատման կոդը համակարգում մուտքագրելուց հետո օգտատիրոջ նշած հեռախոսահամարին ուղարկվում Է SMS հաղորդագրություն նույնականացումը հաստատվելու վերաբերյալ, իսկ վեբ հավելվածի միջոցով նույնականացվելու դեպքում՝ նաև բջջային հավելվածը ներբեռնելու հղումը:

12. Եթե օգտատերը նախկինում գրանցված է եղել համակարգում, ապա նույնականացում անցնելուց հետո բոլոր տվյալները վերականգնվում են:».

2) որոշման N 1 հավելվածի 5-րդ գլուխն ուժը կորցրած ճանաչել.

3) որոշման N 1 հավելվածի 22-րդ և 31-րդ կետերում «3» թիվը փոխարինել «10» թվով.

4) որոշման N 1 հավելվածի 36-րդ կետից հանել «և ակտիվացման» բառերը.

5) որոշման N 1 հավելվածի 37-րդ կետը «վեբ (web)» բառերից հետո լրացնել «և բջջային (mobile)» բառերով, իսկ «հավելվածը» բառը փոխարինել «հավելվածները» բառով.

6) որոշման N 2 հավելվածի 2-րդ գլուխը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. ԳՐԱՆՑՈՒՄ ԵՎ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՈՒՄ

2. Օգտատերերը նույնականացում կարող են անցնել «activesociety.am» վեբ կայքում կամ «Ռոադ Քոնթրոլ Արմենիա» («Road Control Armenia») բջջային հավելվածում:

3. Բջջային հավելվածն օգտատերը կարող է ներբեռնել «Play Market» կամ «App Store» համակարգերից՝ կախված սարքի տեսակից, ինչպես նաև ներբեռնել հաստատման SMS հաղորդագրությունում նշված հղումով:

4. Հավելվածը ներբեռնելուց և գործարկելուց հետո բացվող պատուհանում օգտատերն ընտրում է հավելվածի լեզուն և հաստատում:

5. Լեզուն հաստատելուց հետո օգտատերն ընտրում է «Նոր օգտատեր» դաշտը:

6. Մինչև նույնականացում անցնելն օգտատերը համաձայնում է համակարգի ընդհանուր դրույթներին և պայմաններին, որի համար «Համաձայն եմ ընդհանուր դրույթներին և պայմաններին» ակտիվ հղման վրա սեղմելու դեպքում բացվում է «Դրույթներ և պայմաններ» պատուհանը: Ծանոթանալով համակարգի օգտագործման դրույթների և պայմանների հետ՝ տալիս է համաձայնությունը:

7. Հաջորդ պատուհանում օգտատերը համապատասխան դաշտերում լրացնում է հետևյալ տվյալները՝

1) անունը, ազգանունը, հայրանունը.

2) անձնագրի կամ նույնականացման քարտի տվյալները (փաստաթղթի համարը, այն տրամադրած ոստիկանության ստորաբաժանման ծածկագիրը, տրամադրման և վավերականության ժամկետները).

3) հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշը չստանալու մասին տեղեկանքի համարը.

4) այն հեռախոսահամարը, որին փոխանցվելու է հաստատման կոդը:

8. Նույնականացում անցնելուց և հաստատման կոդը համակարգում մուտքագրելուց հետո օգտատիրոջ նշած հեռախոսահամարին ուղարկվում է SMS հաղորդագրություն նույնականացումը հաստատվելու վերաբերյալ, իսկ վեբ հավելվածի միջոցով նույնականացվելու դեպքում՝ նաև բջջային հավելվածը ներբեռնելու հղումը:

9. Եթե օգտատերը նախկինում գրանցված է եղել համակարգում, ապա նույնականացում անցնելուց հետո բոլոր տվյալները վերականգնվում են:».

7) որոշման N 2 հավելվածի 14-րդ և 22-րդ կետերում «3» թիվը փոխարինել «10» թվով.

8) որոշման N 2 հավելվածի 27-րդ կետից հանել «և ակտիվացման» բառերը.

9) որոշման N 2 հավելվածի 28-րդ կետը «վեբ (web)» բառերից հետո լրացնել «և բջջային (mobile)» բառերով, իսկ «հավելվածը» բառը փոխարինել «հավելվածները» բառով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

3. Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում ապահովել որոշմամբ նախատեսված տեղեկատվական համակարգի փոփոխությունը և համապատասխանեցումը սույն որոշման պահանջներին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Երևան

08.09.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ